

ԿԱՐՄԻՔ

Գոռ Արամյանի Հովհաննիսյանի

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ 1920-ԱԿԱՆ -

2023ԹԹ. ԻՍԼԱՄԻ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԻՆԹԵԶԸ վերնագրով ատենախոսության

վերաբերյալ

Թուրքիայի թե արտաֆին և թե ներֆին ֆազաֆական գործընթացների ու զարգացումների հետ կապված հիմնախնդիրների խորը ուսումնասիրությունը հայ արևելագիտության առաջնահերթություններից է: Առավել ևս՝ բուրֆական ինֆնության վերաբերյալ ցանկացած հետազոտություն մեզանում բացառիկ կարևորություն ունի:

Այդ իմաստով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը թիրախավորել է Թուրքիայի հենց այդ հիմնախնդրի հենֆային բաղկացուցիչները՝ ազգայնականությունն ու իսլամականությունը: Թեև վերոհիշյալ թեմաների վերաբերյալ առկա են բազում հրապարակումներ ու հետազոտություններ, որոնց անդրադարձել են տարբեր օտար ու հայ գիտնականներ, այսուհանդերձ հարևան երկրում ազգայնականության և իսլամականության միաձուլման դինամիկան՝ երկարատև գործընթացի տարբեր փուլերի հետազոտությունն իրականացվում է առաջին անգամ:

Մենք նաև չպետք է անտեսենք այն հանգամանքը, որ ժամանակակից Թուրքիայի Հանրապետությունը դեռևս շարունակում է մնալ առաջնային սպառնալիքը Հայաստանի Հանրապետության գոյատևման ու ազգային անվտանգության ապահովման համար: Հայ հասարակագիտական հանրույթի վրա է նաև դրված մեծ պատասխանատվություն՝ թիրախավորված ու նպատակալաց գործունեությամբ ուղիներ մատնանշելու Հայաստանի Հանրապետությանը պարտադրված այս «հյուժիչ» երկարատև պատերազմի պայմաններում մեր պետականության դիմադրողականության բարձրացման, արդի մարտահրավերների արդյունավետ կերպով հաղթահարման ուղղությամբ:

Ուստի սկզբից ևեթ հարկ է արձանագրել, որ Գոռ Հովհաննիսյանի (հեղինակի) ներկայացված ատենախոսության թեման ու դրա շրջանակներում ֆննարկման առարկա դարձրած չափազանց կարևոր և արդիական հարցերը ողջունելի են և պահանջված:

Ազգային պետության կայացումը շարունակում է լինել առաջնային խնդիր Թուրքիայի համար, որի արմատները գնում են դեռևս Օսմանյան ժամանակաշրջան: Հայտնի է, որ 19-րդ դարի վերջում երբ Փարիզում գտնվող որոշ երիտարուբերին հարցնում էին, թե ինչ ազգության են պատկանում, նրանք նախևառաջ պատասխանում էին. «Մենք մուսուլման ենք» կամ լավագույն դեպքում. «մենք օսմանցիներ ենք»:

Թուրքիան այդպես էլ անկարող գտնվեց ավարտելու ամբողջական անցումը կայսրությունից դեպի հանրապետություն, ավելին՝ այսօր էլ իր աշխարհաֆաղական տեսիլը կառուցում է այդ կայսրության վերածննդի վրա: Այստեղ է, որ աստիճանաբար ի հայտ է եկել նոր զաղաֆարական հենքը՝ ազգային և

խլամի սինթեզը, որի ուսումնասիրմանն էլ նվիրված է ֆենարկման առարկա հանդիսացող
ատենախոսությունը:

Անհերքելի փաստ է, որ Թուրքիան ստեղծվեց որպես մուսուլմանների երկիր՝ հստակ ազգային կամ
մշակութային պատկանելությունից զուրկ: Պետք է մեկ անգամ ևս արձանագրենք, որ դեպի ազգայնական
աշխարհիկ պետության բարդ և երկարատև ստիպողաբար անցումը պարտադրված և պրագմատիկ ֆայլ էր
ֆեմալականների կողմից: Ինչպես նշում է ատենախոսության հեղինակը. «չնայած ֆեմալականների
իրականացվող աշխարհիկ ազգայնական գաղափարների ներդրման փորձերին ու ակտիվ ազդեցիվ ֆայլերին,
բնակչության որոշակի պահպանողական մասը օտարվեց պետությունից, ինչն էլ հիմք դրեց հասարակության
բևեռացմանը»:

Ատենախոսության մեջ հեղինակը մանրամասնորեն ներկայացնում է Թուրքիայի ֆաղափականության
մեջ աստիճանաբար իսլամական գործոնի ակտիվացումը սկսած 1950-ականներից, երբ
«Ժողովրդավարական» կուսակցությունը սկսեց «թուլացնել կրոնական ինֆնաարտահայտման
սահմանափակումները» երկրում ու այնուհետև 2002թ. «Արդարություն և զարգացում» կուսակցության
իշխանության գալը, երբ կրոնական գործոնը Թուրքիայի ֆաղափականության մեջ գերիշխող դիրք գրավեց:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան
ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ամբողջ
ծավալը 200 էջ է: Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, գիտական նորույթը,
ներկայացվում են ատենախոսության նպատակը և խնդիրները, տեսամթոթղական հիմքը, ինչպես նաև
ֆենվում են օգտագործված աղբյուրները, գրականությունը և տրվում է հարցի ուսումնասիրվածության
ընդհանուր պատկերը:

Առաջին գլուխը՝ «Իսլամի ու աշխարհիկության պայքարի առաջին փուլը Թուրքիայում.
փոփոխական հաջողությունների շրջան (1920-1960 թթ.)» վերնագրով բաղկացած է երեք
ենթագլուխներից, ուր մանրամասն ներկայացված են ֆեմալական շարժման ընթացքում իսլամական
հոետորաբանության կիրառման և հասարակական կյանքում կրոնի ազդեցության թուլացման առաջին
փորձերը, ինչպես նաև ֆեմալական աշխարհիկ բարեփոխումների ընթացքը, դրանց շարժառիթներն ու
նպատակները: Նույն գլխում մանրամասն անդրադարձ է կատարվում 1938 թ. Աթաթյուրի մահից հետո
աշխարհիկության նահանջի դրսևորումներին, 1950-60 թթ. «ֆաղափական իսլամի» գաղափարախոսության
էությունն ու դրսևորումները, ինչպես նաև 1960 թ. ռազմական հեղաշրջման պատճառներին ու
նախադրյալներին:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերաբերվում է «Քաղափական իսլամի» և «ֆաղափական
ազգայնականության» զուգահեռ վերելքի առանձնահատկություններին Թուրքիայում 1960–2001 թթ.: Այն
բաժանված է հինգ ենթագլուխների, որոնցում մանրամասնորեն ներկայացված են 1960 թ. հեղաշրջումից

հետո զինվորականության կողմից աշխարհիկության վերահաստատման ջանքերը, ինչպես նաև «Արդարություն» կուսակցության կողմից «ֆաղափական իսլամի» ֆաղափականության շարունակման զգուշավոր փորձերը: Այնուհետև, սրվում է Թուրքիայում «ֆաղափական իսլամի» և «ֆաղափական ազգայնականության» ինստիտուցիոնալացման դինամիկան, «Ազգային տեսակետի» և «Ազգայնական շարժում» կուսակցության ձևավորումը, ինչպես նաև «Իսլամամետ և ազգայնական ուժերի ազդեցությունն ու դերակատարման անը Թուրքիայի ներֆաղափական կյանքում 1971-1980 թթ.»:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակն անդրադառնում է իսլամամետ և ազգայնամոլական գաղափարախոսությունների անը զսպելու և վերահսկելու փորձերին և այդ համատեքստում «թուրք-իսլամական սինթեզի» գաղափարի մշակմանը: Նույն գլխի վերջին ենթաբաժինը նվիրված է Իսլամի և ազգայնականության զարգացման «փափուկ» ու «կոշտ» ուժի համադրման մեթոդներին (1982-2001 թթ.)», ուր նկարագրվում են 1980 թ. ռազմական հեղափոխումից հետո իշխանության եկած «Մայր Հայրենիք» կուսակցության կողմից իսլամի և ազգայնականության սինթեզի զարգացմանն ուղղված ֆայլերը, իսլամամետ «Բարօրություն» կուսակցության գործունեությունը, կոալիցիոն կառավարության կազմումը, ինչպես նաև «Ազգային տեսակետի» շարժման պառակտումը:

Ատենախոսության երրորդ գլուխը գիտական նորույթի և արդիականության, ինչպես նաև ֆննդարկվող հարցերի կարևորության տեսանկյուններից թերևս ամենաառաջնորդվածն է: Այն նվիրված է իսլամի և ազգայնականության սինթեզին որպես Թուրքիայի ֆաղափական նոր ինֆորմացիայի հիմք (2002-2023 թթ.)» և կազմված է վեց ենթագլխից: Հատկապես երրորդ գլխի այն մասը, որը վերաբերվում է ԱԶԿ օրջանում աշխարհիկ կարգերի թուլացմանն ու իսլամի դերի ընդգծմանն ուղղված բարեփոխումներին, ինչպես նաև կրթական և հասարակական ծրագրերին ԱԶԿ գաղափարախոսության վրա իսլամամետ, ազգայնամոլ գործիչների ազդեցությանն ու ԱԶԿ ֆաղափական առաջնորդների կողմից կրոնական և ազգայնամոլական հոետորաբանության և խորհրդանիշների կիրառման պատճառներին ու նպատակներին: Այդ նույն գլխում հեղինակը ներկայացնում է մեզ ԱԶԿ արտաֆին ֆաղափական օրակարգում իսլամի և ազգայնականության սինթեզի դրսևորումների էությունն ու նպատակները, ինչպես նաև արտաֆին ֆաղափական օրակարգում իսլամական և ազգայնական լոզունգների ու հոետորաբանության կիրառումը:

Կարևոր և ողջունելի կարելի է համարել հեղինակի անդրադարձը ԱԶԿ դաշինքին «Ազգայնական շարժում» կուսակցության հետ, այդ դաշինքի գաղափարական և ֆաղափական հիմքերին ու պատճառներին: Հեղինակը միանգամայն իրավացիորեն այդ դաշինքը համարում է իսլամի և ազգայնականության սինթեզի դեյուրե ամրագրում:

Հիշարժան է նույն գլխի վեցերորդ ենթագլուխը, որը վերնագրված է «Քաղափական իսլամի» դիվերսիֆիկացիայի միտումները ժամանակակից Թուրքիայում. «Կրկին Բարօրություն» կուսակցության ստեղծումը», ուր ֆննդության են առնվում ԱԶԿ գործունեության արդյունքում «ֆաղափական իսլամի» դիվերսիֆիկացիայի օրինակներն ու դրսևորումները ընդգծված իսլամամետ «Կրկին Բարօրություն» կուսակցության օրինակով:

Եվ վերջապես, եզրակացությունում հեղինակն ամփոփել է իր ուսումնասիրության վերջնարդյունքները:

Հատկանշական է, որ հետազոտության արջանակներում հեղինակը օգտվել տարաբնույթ թուրքերեն լեզվով աղբյուրներից: Գիտական տեսանկյունից օբյեկտիվությունը պահպանելու համար, անհրաժեշտ է նշել, որ ատենախոսության արջանակներում հեղինակը օգտագործել է նաև Թուրքիայի ֆաղափական տարբեր կուսակցությունների ու միավորների, անհատների գործունեությանը վերաբերող արժեքավոր նյութեր: Վերոնշյալը ևս մեկ անգամ փաստում է այն մասին, որ աշխատանքը եզակի նշանակություն ունի, իսկ արդիականությունը պայմանավորված է ոչ միայն Հայաստանի համար Թուրքիայի կարևորությամբ, այլև առավել լայն տարածաբանում և միջազգային հարաբերություններում նրա ներկայիս դերի ակնհայտ բարձրացման ու առկա անհազուրդ ամբիցիաների հետ:

Ատենախոսությունը լիովին համապատասխանում է գիտական տերմինաբանական ապարատին և ակադեմիական չափանիշներին: Հեղինակին հաջողվել է գրագետորեն սահմանել հետազոտության խնդիրները, նպատակները և հանգել տրամաբանական եզրահանգումների:

Կարևոր է նշել, որ ատենախոսության յուրաքանչյուր գլուխն իր ենթագլուխներով բխում է նախորդինից և կապված է հաջորդի հետ պատճառահետևանքային կապով: Դա ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ հեղինակին հաջողվել է ապացուցել գիտական աշխատանք կատարելու իր ունակությունը:

Ատենախոսությունն անկասկած ունի գիտական արդիականություն, իսկ հետազոտության արջանակներում դրված խնդիրներն ու ստացված արդյունքները չափազանց կարևոր են թե գործնական ֆաղափականության և թե տեսական ֆաղափագիտական ուղղումներով: Քաղափական իսլամի և ազգայնականության հարաբերակցության ու զարգացման միտումների ճշգրիտ վերլուծությունը կարևոր է ֆաղափագիտական մի շարք հարցերի լուսաբանման տեսանկյունից: Տեսական կարևորությունից բացի թեման ունի նաև գործնական և ֆաղափական ակտուալ նշանակություն, քանի որ աշխատությունում առաջ ֆակցիոնալ թեզերը, բարձրացված հարցերը, վերլուծությունները և եզրակացությունները ոչ միայն լուսաբանում են նշված պատմական ժամանակաշրջանում Թուրքիայի ֆաղափական դաշտում տեղի ունեցած լրջագույն փոխակերպումները, այլև կարող են օգտագործվել Թուրքիայի նկատմամբ Հայաստանի Հանրապետության արտաքին ֆաղափականության մշակման ընթացքում:

Այսուհանդերձ հարկ է նշել.

Թեև թեմայի կարևորությունն անհերքելի է և միանգամայն հասկանալի է «իսլամի և ազգայնականության սինթեզի» դինամիկան ներկայացնելը ժամանակակից Թուրքիայի ստեղծումից ի վեր, այսուհանդերձ հետազոտության ժամանակագրական սահմանները չափազանց մեծ են՝ շուրջ մեկ հարյուրամյակ: «Քաղափական իսլամի» և ազգայնականությունը, նրանց հարաբերակցությունն ու փոխակերպումը Թուրքիայի ֆաղափական կյանքում ունեցել են տարբեր դրսևորումներ և զարգացման փուլեր, որոնցից յուրաքանչյուրը կարող է առանձին հետազոտության առարկա լինել:

Ատենախոսության մեջ հեղինակը մանրամասն ներկայացրել է «ֆաղափական ազգայնականության»
և «ֆաղափական իսլամի» փոխակերպման բոլոր փուլերը հիմնականում ֆաղափական դաժտի կարևոր
դերակատարների և նրանց որդեգրած գաղափարախոսության կամ ծրագրային դրույթների
տեսանկյունից: Այսուհանդերձ, ցանկալի կլիներ որպեսզի ատենախոսության հիմնահարցը՝
ֆաղափական ինֆնության փոփոխության դինամիկան Թուրքիայիում ենթարկվեր հեղինակի կողմից
բազմաչափ /multidimensional/ վերլուծության: Դա նրան հնարավորություն կտար
ներկայացնելու ոչ միայն Թուրքիայում «ֆաղափական իսլամի» հաղթարեալի պատճառները, այլև
վերհանելու իսլամականության և ազգայնականության սինթեզի գործընթացի վրա ազդեցություն
ունեցած այլ գործոնները: Օրինակ՝ Թուրքիայում Սաուդյան Արաբիայի աջակցությունը վայելող
նոր գործարարար վերնախավի ի հայտ գալը, ինչը մեծապես նպաստեց երկրի ներսում կարևոր
սոցիալական հենարանի՝ իսլամական ցանցի ստեղծմանը, որն էլ արդյունավետ օգտագործվեց
ընտրությունների ժամանակ: Կամ այլ ոչ պակաս կարևոր գործոնների՝ զինվորականության կողմից
ցուցաբերվող ակնհայտ ֆաղափական կեցվածքը ընդդեմ ձախակողմյան ուժերի, կամ էլ երկրում
տեղի ունեցող սրընթաց ուրբանիզացիան և այլն: Այդ բոլոր գործոնների վերլուծությունն էլ իր
հերթին թույլ կտար հստակեցնել Թուրքիայի ֆաղափական դաժտում իսլամականության
հեռանկարները, իսլամի տեղն ու դերը երկրի ապագայում:

Թուրքիայում ազգայնականության հետ կապված հարցերի ուսումնասիրությունը այս կամ այն կերպ
առնչվում է նաև և այդ երկրում հայերի և ֆրիստոնյա այլ փոքրամասնությունների ներկայության
հետ կապված հարցերին: Մի առիթով Հնդկաստանի հիմնադիր հայրերից Ներուն ասել է, որ
«թուրքերի օրինակը առանձնահատուկ է. թե ինչպես սեփական անկախության համար մարտնչող
ազգի պաշտպանական ազգայնականությունը կարող է վերածվել հարձակողական՝ ազատության
համար պայքարը դառնալ այլ ժողովուրդների վրա գերիշխանություն հաստատման համար
պայքար»: Այդ ժողովուրդներից էին նաև հայերը, հույները և այլ կրոնական և ազգային
փոքրամասնության ներկայացուցիչները: Թուրքերը իրենց ինֆնության շոշափելի մասը կառուցեցին
այդ ժողովուրդների ազգային արժեքների ու մեակութային ժառանգության յուրացման վրա: Ինչպե՞ս
և ո՞ր տեղավորվեցին հայերն ու մնացյալ փոքրամասնությունները Թուրքիայում
ազգայնականության և իսլամի սինթեզի գործընթացում 1923թ. ի վեր, ինչպիսի՞ գաղափարական
ու գործնական ֆաղափական դրսևորումներ ստացավ թուրքական ազգային այդ
«գերիշխանությունը»: Ատենախոսությունը անկասկած կսահեր եթե ատենախոսության մեջ թեկուզ
հակիրճ անդրադարձ կատարվեր այդ՝ դեռևս իր արդիականությունը չկորցրած հարցին:

Քրդական հարցը Թուրքիայի ոչ միայն ֆաղափական ինֆնության, այլև ազգային անվտանգության
առաջնային հարցերից է: Այն նաև Հայաստանի Հանրապետության համար ունի կարևոր
ոգտնական նշանակություն: Ուստի, ատենախոսության մեջ ավելորդ չէր լինի, եթե
անդրադարձ կատարվեր Քրդական հարցի նկատմամբ Թուրքիայի ֆաղափական դաժտի հիմնական

խաղացողների կողմից որդեգրած տարբեր փուլերում մարտավարությանը, քրդական հարցի
զինամիկային հենց իսլամի և ազգայնականության սինթեզի տեսանկյունից:

Վերոհիշյալ դիտողություններն ու առաջարկները սակայն որևէ կերպ չեն նվազեցնում
ատենախոսության գիտական արժեքը: Հարկ եմ համարում ևս մեկ անգամ նշել, որ Գոռ Հովհաննիսյանի
ատենախոսությունը ավարտուն, համալիր հետազոտություն է, որն իր տեսակի մեջ յուրահատուկ է:

Անխտանքը կարող է և պետք է երաշխավորել հրատարակության, իսկ հնարավորության դեպքում նաև՝
օտար լեզուներով:

Ատենախոսությունը համապատասխանում է պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճան հայցելու համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակ՝ Գոռ Հովհաննիսյանը, միանգամայն
արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

պ.գ.գ., պրոֆեսոր Ռուբեն Կարապետյան
06.12.2024



Ռ. Կարապետյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտֆարսուղար

պ.գ.թ., դոցենտ Հ.Ղ. Մուրադյան

